ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«21» նոյեմբերի 2023 թ.

№ 19-Ա

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ +(374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Որոշման ընդունման համար հիմք հանդիսացած փաստերը.**

Երևանի քաղաքապետարանի և «ԳՐԻԳ-ՇԻՆ» ՍՊ ընկերության 16.08.2023 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-23/207» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի(այսուհետ՝ Պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Մ. Խորենացի, Գլինկայի և Բելինսկու փողոցներում՝ եզրաքարերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը կապալառուի կողմից չի իրականացվել:

Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը՝ իր 01.11.2023թ. հ. 34/199531-23 և 06.11.2023թ. հ. 34/202468 գրություններով առաջարկել է սեղմ ժամկետներում կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն դրանց պահանջները չեն կատարվել, հետևաբար ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի հիմքով հրաժարվել է «ԳՐԻԳ-ՇԻՆ» ՍՊ ընկերության հետ 16.08.2023 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-23/207» ծածկագրով գնման պայմանագրից և միակողմանի /լրիվ/ լուծել է հ. «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-23/207» ծածկագրով գնման պայմանագիրը, որը 11.09.2023 թականին հրապարակվել է www.gnumner.am կայքում:

2. **Որոշումն ընդունելու հիմնավորումը.**

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Scanned by TapScanner

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում... »:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԳՐԻԳ-ՇԻՆ» ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ

21 նոյեմբերի, 2023թ.
Երևան

Scanned by TapScanner